«Նոր ժամանակի կրթություն»
ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Ընթերցանությունը որպես ուսուցման գործիք

Առարկան՝ Մայրենի

Հետազոտող ուսուցիչ՝ Մանվելյան Մեղա

Ուսումնական հաստատություն՝ Երևանի Վրեժ Համբարձումյանի անվան հ.17 հիմնական դպրոց

Երևան 2022

Բովանդակություն

Ներածություն……3

Ընթերցանությունը որպես խոսքային գործունեության տեսակ……5

Ընթերցանությունը որպես ուսուցման գործիք……..8

Եզրակացություն……15

Օգտագործված գրականություն……..17

Ներածություն

Հետազոտության թեմայի արդիականությունը: Արդի կրթական հարափոփոխ պահանջներին համապատասխան գիտելիքների ձեռքբերման տեսանկյունից՝ կարևորվում է ընթերցանությունը: Մայրենիի ուսուցման դասագործընթացում մեծ տեղ է հատկացվում մանկական երկերի, բանահյուսական նյութերի ընթերցմանը՝ երեխաների ընթերցողական կարողությունների և հետաքրքրության ձևավորման տեսանկյունից: Ուսումնական գործընթացում ընթերցանությունը որպես ուսուցման գործիք դիտարկելը ենթադրում է ուսուցման և ուսումնառության մակարդակի բարձրացման և ուսումնական ու դաստիարակչական խնդիրների լուծման պայմանների ստեղծում՝ գրական ստեղծագործությունների առավել նպատակային ընթերցանության միջոցով: Նպատակային ընթերցանությունն օգնում է երեխային հիմնավոր ըմբռնելու գեղարվեստական երկի դաստիարակչական, ուսուցողական, ճանաչողական կողմերը, գնահատելու մարդկային լավ և վատ արարքները, դասեր քաղել, լինել ազնիվ, բարի ու ներողամիտ սոցիալական ցանկացած միջավայրում: Այդ տեսանկյունից՝ չափազանց կարևոր է ընթերցանության միջոցով ուսուցման հիմնահարցերի ուսումնասիրությունը տարրական դասարաններում:

Կրտսեր դպրոցականներին հրամցվող ուսումնական նյութերի նպատակային ընթերցումը ուսուցման գործիք դարձնելուն նպատակաուղղելը օգնում է ապահովել ուսումնասիրվող նյութի համակողմանի յուրացումը, ինչպես նաև օգնում է երեխային հիմնավոր ըմբռնելու նյութի թեմատիկ-գաղափարական հիմքը, և մեծանում է նրա դաստիարակչական, ուսուցողական, ճանաչողական նշանակությունը:

Հետազոտության նպատակը: Աշխատանքի նպատակը ընթերցանության միջոցով ուսուցման կազմակերպման հիմնահարցերի ուսումնասիրումն է՝ բացահայտելու դրանք կրտսեր դպրոցականների ընթերցողական հետաքրքրության ձևավորման միջոց դարձնելու հնարավորությունները և ընթերցանության ներգործությունը կրտսեր դպրոցականի դաստիարակության, աշխատասիրության, մտածողության, բարոյական արժեքների ձևավորման, զարգացման վրա:

Հետազոտության խնդիրները: Հտազոտական աշխատանքի նպատակի իրականացման համար առանձնացվել են հետևյալ խնդիրները.

1. ուսումնասիրել և վերլուծել մասնագիտական գրականության մեջ սույն հիմնահարցի վերաբերյալ առկա տեսական մոտեցումները:

2. ուսումնասիրել ընթերցանության անմիջական ազդեցությունը կրտսեր դպրոցականների ընթերցողական հետաքրքրության և նրանց անհատականության ձևավորման վրա,

5. վերհանել ուսուցման և ուսումնա-դաստիարակչական խնդիրների լուծման արդյունավետության ապահովման համար ընթերցանության նշանակությունը,

6. Նկարագրել ընթերցանությունը որպես ուսուցման գործիք դարձնելուն նպատակաուղղված աշխատանքներ:

Ընթերցանությունը որպես խոսքային գործունեության տեսակ

Ընթերցանությունը, լինելով խոսքային գործունեության տեսակներից մեկը, բարդ հոգեֆիզիոլոգիական գործընթաց է, որը կարող է իրականացվել միայն որոշակի լեզվական հիմքի վրա (այսինքն ՝ հնչյունական, բառապաշարային և քերականական գիտելիքների հիման վրա), որը ներառված է տարատեսակ առաջադրանքների և վարժությունների համակարգում, որոնք ուղղված են բանավոր խոսքի գրագետ վերարտադրության և ընթերցածի ըմբռնման հմտությունների և կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը:

Խոսքային գործունեության շրջանակներում առավել նշանակալի տեղ է հատկացվում ընթերցանությանը: Ընթերցանության գործընթացն ուղեկցվում է այնպիսի մտավոր գործողություններով, ինչպիսիք են վերլուծությունը, համադրումը, եզրակացությունը, արտացոլումը և այլն: Արդյունքում ընթերցողը ստանում է տեղեկատվություն, որը շատ կարևոր է սոցիալական հաղորդակցական գործունեության ընթացում:

Ընթերցանությունը գրավոր տեքստի ընկալումն ու ըմբռնումն է: Լինելով անհատի հաղորդակցական և սոցիալական գործունեության բաղադրիչ՝ այն ապահովում է հաղորդակցության ձևերից մեկը՝ գրավոր հաղորդակցումը: Քանի որ ընթերցանության նպատակը տեղեկատվություն ստանալն ու այն մշակելն է, ուստի ընթերցանության միջոցով ուսուցման նպատակը կապվում է գրավոր խոսքային հաղորդագրությունից, այսինքն՝ տեքստից՝ որպես իմաստային անբաժանելի ամբողջությունից և որպես կարդալ սովորելու միավորից տեղեկատվություն քաղելու հմտությունների զարգացման հետ:

Որքան էլ ընթերցանությունը ուսուցման միջոց է, առաջին հերթին՝ լեզվի ուսուցման, այդուհանդերձ՝ տարբեր են այն բնութագրող մասնագիտական, գիտական, մեթոդաբանական սահմանումները: Այսպես՝ կա տեսակետ, որ «Ընթերցանությունը խոսքային գործունեության գրավոր վերարտադրողական տեսակ է, որի արդյունքում մենք ստանում ենք անհրաժեշտ տեղեկատվություն, հույզեր կամ

բացահայտում ենք հեղինակի դիրքորոշումը»[1]: Մեկ այլ սահմանման համաձայն՝ ընթերցանությունը «խոսքային գործունեություն է, որը լուծում է մի շարք հաղորդակցական խնդիրներ»[2]:

Հայտնի է ընթերցանության մեկ այլ բնորոշում, ըստ որի՝ ընթերցանությունը դասակարգվում է որպես հմտություն՝ հիմնված տեքստի ընկալման և ըմբռնման վրա[3]:

Տեքստային տեղեկատվությունը հասկանալով և ընկալելով ընթերցելու հմտությունների շարքում առանձնացնում են հետևյալները.

- ընթերցանության տեխնիկայի հետ կապված հմտություններ, որոնք ձևավորվում են նախնական հնչյունական դասընթացում,

- լեզվական նյութի, մասնավորապես՝ բառաբանական միավորների, քերականական երևույթների և շարահյուսական միավորների ըմբռնման հետ կապված հմտություններ,

- ընթերցելիս հիմնականը երկրորդականից տարբերելու ունակություն:

Ընթերցանությունը, որպես խոսքային գործունեության այլ տեսակների հիմնական բաղադրիչ, ընդհանուր առմամբ դիտարկվում է որպես արտասանական հմտությունների ձևավորման, սովորողի բառապաշարի ընդլայնման, հարստացման գործընթացում ուսուցման արդյունավետ միջոց, այն բարելավում է սովորողների լեզվական և հաղորդակցական - խոսքային կարողությունները: Վերը բերվածից կարելի է եզրակացնել, որ ուսումնական գործընթացի որոշակի պայմաններում ընթերցանության ուսուցումը կարող է լինել և՛ ինքնուրույն նպատակ, և՛ խոսքային գործունեության այլ տեսակների յուրացման միջոց:

Տարրական դասարաններում այս կամ այն դասանյութի ուսումնասիրումը հիմնականում իրականացվում է ընթերցանության միջոցով, որը հնարավորություն է

---

[1] Акишина А.А. Учимся учить. Для преподавателя русского языка как иностранного / А.А. Акишина, О.Е. Каган. 7-е изд. М.: Русский язык. Курсы, 2010, с. 331.

[2] Фоломкина С.К. Обучение чтению: текст лекций по курсу «Методика преподавания иностранных языков». М., 1980, с. 6.

[3] Пассов Е.И. Обучение чтению: Учебное пособие. Воронеж: НОУ «Интерлингва», 2002, с. 27.

տալիս կազմակերպել երեխաների ինքնուրույն գործունեությունը և նպաստել նրանց մտածողության, տրամաբանական, հաղորդակցական, համագործակցային, ինքնուրույն գործունեության և ստեղծագործական ունակությունների զարգացմանը: Սակայն, ընթերցանությունը պետք է մշտապես զուգակցել նաև այլ՝ ինչպես ավանդական, այնպես էլ նոր՝ փոխգործուն կամ ինտերակտիվ մեթոդներով: Այս դեպքում՝ աշակերտները ոչ միայն ընթերցում են դասանյութը, այլ նաև նրանում պատկերվող իրողությունները, հերոսների արարքները, հատկանիշները փորձում են կապել, համադրել և համեմատել կյանքում, առօրյայում հանդիպող նմանատիպ իրավիճակների, խնդիրների հետ, գնահատել հերոսների արարքները, արտահայտել իրենց վերաբերմունքը, հարցեր տալ: Միևնույն ժամանակ՝ շատ կարևոր է ընթերցանության ընթացքում աշակերտների ուշադրությունը դասանյութի յուրաքանչյուր հատվածը պատկերող նկարների վրա սևեռելը, որն ընթերցածն առավել պատկերավոր ու դյուրընկալ է դարձնում:

Ընթերցանության դասերին ուսուցիչը նախապես աշակերտների ուշադրությունը սևեռում է ընթերցելու համար նախատեսված դասանյութի հիմնական մտքի վրա, ընդգծում դրա կարևորությունը, օգտակարությունը մարդու կյանքում՝ նրանց մեջ այն ընթերցելու հետաքրքրություն առաջացնելով: Ուսուցչի խոսքն ուղեկցվում է զրույցի, ընթերցանության, մեջբերումների տարրերով, աշակերտների խաղային և ստեղծագործական աշխատանքով: Ընթերցանությունը կարելի է նաև ուղղորդել հարցադրումներով: Այսպես՝ մինչ դասանյութի տրված հատվածի ընթերցանությանն անցնելը՝ ուսուցիչն աշակերտներին հարցադրումներով օգնում է երեխաներին վերհիշել տվյալ նյութի վերաբերյալ իրենց գիտելիքները: Որպես ընթերցանության խթան՝ կարևորում ենք նաև ընթերցանության նպատակի նախանշումը, հստակեցումն ու սահմանումը, երբ աշակերտներն, ուսուցչի օգնությամբ՝ ընթերցանության հետ կապված բացատրություններից հետո, նախապես սահմանում են ընթերցելու նպատակը, ապա ընթերցում են բնագիրը:

Ընթերցանությունը որպես ուսուցման գործիք

Կարդալու ուսուցումը տարրական դասարաններում մայրենիի դասի հիմնական նպատակն է: Ուսուցման այբբենական շրջանում ձևավորվում է երեխաների կարդալու նախնական կարողությունը: Նրանք կարողանում են կարդալ փոքրածավալ բնագրեր, պատասխանել բնագրի վերաբերյալ ուսուցչի տված հարցերին և դրանց օգնությամբ վերարտադրում են բնագրի բովանդակությունը: Այս ամենը աշակերտին նախապատրաստում է բացատրական ընթերցանության մեթոդով կազմակերպվող մայրենիի դասին: Կարդալու կարողության մշակման արդյունավետությանը նախնական փուլում հատկապես նպաստում է բարձրաձայն ընթերցանությունը:

Կարդալը 6-7 տարեկան երեխայի համար բարդ աշխատանք է, որն իրականանում է բազմաթիվ հոգեկան գործընթացների միջոցով (մտածողություն, հիշողություն, կամք, զգացմունք և այլն): Ընթերցողական կարողության ձևավորման գերխնդիրն այնպիսի ընթերցողի ձևավորումն է, ով կարդալու ընթացքում ձեռք բերած տեղեկատվությունը մշակում է, իմաստավորում է և օգտագործում:

Մայրենիի դասի գլխավոր խնդիրը կրտսեր դպրոցականների կարդալու կարողության ձևավորումն է, որը ներկայանում է որպես ազատ, անկաշկանդ գործունեություն: Այն իրականանում է կարդացած բնագրի շուրջ նրա հեղինակի հետ երկխոսությունների մեջ մտնելու ճանապարհով՝ ձևավորելով ընթերցողական ընդարձակ և բազմաբնույթ հետաքրքրություններ: Ընթերցելն օգնում է երեխային մտածել ամենաբազմազան խնդիրների շուրջ, խնդիրներ, որոնց նա իր առօրյա կյանքում հաճախ չի բախվում. «Ընթերցելը մեկ ուրիշի օգնությամբ մտածելու արվեստ է, քանի որ կարդալ նշանակում է մտածել հեղինակի հետ միասին»[4]:

Հասկանալով կարդալու կարողության մշակումը կրտսեր դպրոցի ընթերցանության դասի գերխնդիրն է: Չպետք է մոռանալ, որ կարդալու կարողության ձևավորումը տարրական դպրոցի նպատակներից է, որը ուսուցման հետագա

[4] Ջ. Գյուլամիրյան, Կարդալու կարողության և խոսքի զարգացումը տարրական դասարաններում, Ե., Լույս, 1998, էջ 4:

օղակներում դառնում է գիտելիքների ձեռքբերման միջոց: Աշակերտներին հասկանալով կարդալ սովորեցնելու պրակտիկայում գործածվում են բազմաթիվ հնարներ: Մասնավորապես, արդյունավետ է հատված առ հատված կարդալը և զույգերով մեկնաբանելը (իրար կողքի նստած), կարդացածի բովանդակության շուրջ զրուցելը, իրար պատմելն ու դատողություններ անելը և այլն: Շահեկան է նաև կարդալ հանձնարարելուց առաջ բնագրի վերաբերյալ որոշակի առաջադրանքներ տալը, ընտրովի ընթերցանության տարաբնույթ ձևերի կիրառությունը, հատվածաբար կարդալն ու այդ հատվածի հիմնական բովանդակության վերլուծությունը և այլն[5]:

Գեղարվեստական (պատմվածք, բանաստեղծություն, հեքիաթ, առակ) և ժողովրդական (առած, ասացվածք, հանելուկ, շուտասելուկ և այլն) մանրապատում ստեղծագործությունների ուսումնասիրումն իրականացվում է ընդհանուրից մասը գնացող հաջորդականությամբ, քանզի բնագրի ամբողջությամբ կարդալուց հետո է միայն հնարավոր հասկանալ նրա հիմնական միտքը՝ գաղափարը, կռահել ենթատեքստը, և միայն այդ դեպքում ստեղծագործությունը կարող է երեխաների վրա դաստիարակչական ներգործություն ունենալ, առաջացնել համանման հույզեր և զգացմունքներ: Շահեկան է, որ հենց սկզբից աշակերտներն ինքնուրույն ընթերցեն ստեղծագործությունը, որպեսզի հետաքրքիր լինի կարդալը, և նրանք ձգտեն մինչև վերջ ընթերցել այն:

Տարրական դասարաններում մայրենիի դասերի ժամանակ կիրառվում է նույն նյութի **բազմակի ընթերցումը**, որի դեպքում շատ երեխաներ են ընթերցում, մասնակցում դասին: Անառարկելի պահանջ է. մայրենիի դասին 15-20 րոպե երեխաները պիտի կարդան: Սակայն միևնույն նյութի անընդհատ ու միատեսակ ընթերցումը ձանձրացնում է երեխաներին՝ նրանց մեջ մարելով ընթերցանության նկատմամբ հետաքրքրությունը: Այդ երևույթը կանխելու համար պետք է ստեղծագործության ընթերցումը կազմակերպել՝ կիրառելով կարդալու բոլոր տեսակները՝ շարունակելով, մեկնաբանելով, ընտրովի, դերերով: Բազմակի ընթերցանության ժամանակ երեխաների հետաքրքրությունը բորբոքվում է ոչ միայն

[5] Ջ. Գյուլամիրյան, նշվ. աշխ., էջ 102-105:

բազմաբնույթ առաջադրանքների, այլև ծավալած մտավոր գործունեության նկատմամբ ուսուցչի ցուցաբերած օգնությամբ, հետաքրքրությամբ. Ուսուցիչը զգացմունքային, արտահայտիչ միջոցներով դրսևորում է իր հետաքրքրությունն ու անկեղծ վերաբերմունքը երեխաների ընթերցանության և արտահայտած մտքերի նկատմամբ: Նրա հիացմունքը ոգևորում է երեխաներին, և նրանք սկսում են ավելի ոգեշնչված կարդալ, կարդացածի մեջ նոր իմաստներ տեսնել, դատողություններ և մտահանգումներ անել[6]:

Ըստ էության, «ընթերցանությունը պետք է դառնա ակտիվ գործընթաց, որն ստիպում է մտածել ընթերցվող նյութի մասին[7]»:

Ընթերցանությունն, իբրև ուսուցման գործիք, մեծացնում է դասաժամերի ուսուցողական, զարգացնող և դաստիարակչական հնարավորությունները, օգնում՝

- ✓ ապահովել ակտիվ և հետաքրքիր ուսուցման գործընթաց,
- ✓ ձևավորել աշակերտների հաղորդակցական կարողությունները,
- ✓ ընդլայնել ուսումնասիրվող նյութի մասին աշակերտների գիտելիքները,
- ✓ հարստացնել բանավոր խոսքը,
- ✓ ձևավորել ընթերցանողական հմտություններ, ընթերցածը հասկանալու, վերլուծելու և քննարկելու, ընթերցանության շնորհիվ յուրացված նոր բառապաշարը սեփական խոսքում գործածելու կարողություններ,
- ✓ զարգացնել և հարստացնել սովորողների վերլուծական միտքը, տրամաբանական մտածողությունն ու բառապաշարը:

Ստորև նկարագրվում են մայրենիի ուսուցման գործընթացի կազմակերպման օրինակներ՝ ընթերցանության գործադրմամբ:

3-րդ դասարան, ուսումնասիրվող դասանյութ՝ «Միզախոտի երազը»[8]

Մինչ հեքիաթն ընթերցելն ուսուցիչը հանդես է գալիս ներածական զրույցքով, որի ընթացքում աշակերտներին ուղղված տարբեր հարցադրումներով՝ փորձում է

---

[6] Գյուլամիրյան Ջ., նշվ. աշխ., էջ 114-115:
[7] Լ. Բալայան, Ընթերցանությունը՝ ակտիվ գործընթաց, Նախաշավիղ, 3-4, Գիտամեթոդական հանդես, ԿԱԻ, Երևան, 2009, էջ 44:
[8] Դ. Գյուրջինյան, Ն. Հեքեքյան, Մայրենի 3, ԷԴԻԹ ՊՐԻՆՏ, Երևան, 2011, էջ 7-8:

նրանց հետ քննարկել հեքիաթի հիմնական մտքին հանգեցնող հարցեր, օրինակ՝ *ի՞նչ է երազը, ի՞նչ է կարոտը, ի՞նչ գույն, համ կամ հոտ ունի կարոտը*, սովորաբար *ի՞նչն են կարոտում կամ ու՞մ են կարոտում*, ե՞րբ է կարոտ ծնվում և ինչու՞ և նմանատիպ այլ հարցեր: Ապա հայտնում է, որ ուսումնասիրվող հեքիաթում ևս կա երազ և կարոտ:

Հնչեցված հարցերին աշակերտների տված պատասխանները լսելուց, ապա՝ դրանք դասարանում ընդհանուր քննարկելուց հետո, ուսուցչի հանձնարարությամբ՝ կազմվում են 5 հոգանոց խմբեր (4 խումբ), խմբերից յուրաքանչյուրն ընտրում է արդեն հնչեցված հարցերից մեկը: Ընտրվեցին հետևյալ հարցերը՝ *ի՞նչ գույն ունի կարոտը, ի՞նչ համ ունի կարոտը, ի՞նչ հոտ ունի կարոտը* և *ի՞նչ է երազը* հարցերը, և խմբերում քաննարկումներից հետո, համատեղ աշխատանքով յուրաքանչյուր խումբ ներկայացրեց իր ընտրած հարցի շուրջ ստացված փոքրիկ շարադրանքը: Շարադրանքներն ընթերցվեցին, քննարկվեցին, ամփոփվեցին, որի արդյունքում երեխաները նորովի արժևորեցին և նոր պատկերացումներ կազմեցին երազի, կարոտի մասին, հասկացան, որ յուրաքանչյուր-ոք զգում է կարոտ հարազատ մարդկանց, հարազատ վայրերի, դեպքերի կամ իրադարձությունների հանդեպ, կարոտում իրեն հոգեհարազատ ամեն բան, որ երազները լինում են լավ և վատ, կամ ցանկալի և ոչ ցանկալի և որ դրանք կարող են նաև իրականություն դառնալ: Կատարված այս աշխատանքը մեծապես նպաստեց աշակերտների երևակայության, ստեղծագործական մտածողության խթանմանը, քանի որ նրանք ցանկություն հայտնեցին խոսել նաև իրենց պատկերացրած, իրենց ցանկալի երազի մասին: Բացի դրանից՝ այդ աշխատանքը ձևավորեց հեքիաթն ընթերցելու դրդապատճառներ՝ պարզել, արդյոք ճի՞շտ էին իրենց պատկերացումները երազի, կարոտի մասին, դրանք նմա՞ն են հեքիաթում ներկայացված երազին, կարոտին և այլն:

Վարժություն 1: Հորինե՛լ արդեն քննարկված թեմայի կամ գաղափարի մասին փոքրիկ հեքիաթ կամ պատմվածք: Իբրև նախաբան ընտրված թեմայի ուսումնասիրմանը հաջորդում է վերջիններիս արծարծած խնդրի, թեմայի շուրջ որևէ հեքիաթ կամ պատմվածք հորինելու առաջադրանքը, որն իրականացվում է

հինգրոպեանոց ազատ շարադրանք մեթոդով[9]: Այնուհետ՝ հորինված նյութերին ծանոթանալուն նախորդում կամ հաջորդում է ուսումնական նյութով նախատեսված բուն հեքիաթի ուսումնասիրումը, որից հետո արդեն ընթերցվում են աշակերտների հորինած հեքիաթները, առանձնացվում բուն ուսումնական նյութով նախատեսված հեքիաթի հետ ունեցած ընդհանրություններն ու տարբերությունները (այս կերպ կընդգծվի նաև քննարկված թեմայի կարևությունը): Նման մոտեցման շնորհիվ՝ ձևավորվում են նաև թիմով աշխատելու, համագործակցելու կարողություններ և հմտություններ: Այսպես՝ ուսուցիչը երեխաներին տեղեկացնում է, որ հեքիաթը երազի և կարոտի մասին է, ապա գրատախտակին գրում հեքիաթի վերնագիրը՝ «Սիզախոտի երազը», ինչպես նաև «Բառ-բանալի» մեթոդական հնարով առանձնացնում 5-6 բառ, որոնք կոչվում են բանալի բառեր, դրանք ևս գրում գրատախտակին՝ աշակերտներին հիշեցնելով, որ բառերը վերցված են այն հեքիաթից, որը պետք է ուսումնասիրել: Ապա հրահանգում է բանալի բառերով ստեղծել այդպիսի պատմություն: Դարձյալ ձևավորվում են խմբեր: Ստեղծված խմբերում ցածրաձայն քննարկվում են խմբի անդամների հորինած պատմությունները և որոշում, թե որ պատմություններն են ներկայացվելու դասարանին: Յուրաքանչյուր խմբից ընտրվում է մեկ կամ երկու պատմություն: Ընթերցումներն ավարտելուց հետո անցնում են ուսումնական նյութը և համեմատություն անցկացնում իրենց ստեղծած պատմությունների և հեղինակային պատմության միջև:

Դասն ամփոփվում է հեքիաթի վերջում տրված հարցերի և առաջադրանքների քննարկմամբ, որից հետո՝ հեքիաթի հիմնական միտքը վերհանելու և առավել ընդգծելու, հիմնավորելու նպատակով երեխաներին հանձնարարվում է հորինել հեքիաթի այլ ավարտ:

Վարժություն 2: Հորինե՛լ հեքիաթի համար այլ ավարտ **«**Ի՞նչ կլիներ, եթե…**»** շարք մեթոդով, երբ ըստ թեմայի ընտրվում են հետաքրքիր «եթե»-ների շարքեր: Օրինակ՝ «Ի՞նչ կլիներ, եթե սիզախոտի տեսածը երազ չլիներ», «Ի՞նչ կլիներ, եթե սիզախոտի երազն իրականանար», «Ի՞նչ կլիներ, եթե սիզախոտի տեսած երազը դուք

[9] Ափոյան Ա.Է., Համագործակցային ուսուցումը տարրական դասարաններում, Գիտական տեղեկագիր, Դասավանդման մեթոդիկա, № 1, Պրակ Բ, Գյումրի, 2014, էջ 341:

տեսնեիք» և այլն: Երեխաների հորինվածքներն ընթերցվեցին, համեմատվեցին հեքիաթի ավարտի հետ, որից հետո նրանք արդեն կարողացան ճիշտ կշռադատել և ընկալել հեքիաթի բուն գաղափարը: Նրանց պարզ դարձավ, որ մարդն ամուր է, ուժեղ և երջանիկ միայն իր հոգեհարազատ միջավայրում, իր հայրենի հողի վրա, ոչ թե օտարության մեջ ու իրեն խորթ միջավայրում, որ ոչ մի շքեղություն, ունեցվածք, փառք ու պատիվ կամ պաշտոն ու կոչում չի կարող փոխարինել հարազատ եզերքին, չի կարող մեղմել այն կարոտը, որն զգում են օտարության մեջ, հարազատներից հեռու:

Ինքնուրույն ընթերցանության նյութերից Հովհաննես Թումանյանի մշակած զրույցներից մեկը՝ «Էսպես չի մնա» խորագրով, նպատակահարմար է ուսումնասիրել «Ուղղորդված ընթերցանության» մեթոդով: Չորրորդ դասարանում աշակերտներն արդեն որոշակի պատկերացում ունեն զրույցի և ավանդության մասին, սակայն ուսուցչի խնդիրն է՝ բանահյուսական այս նմուշների վերաբերյալ նրանց տեսական գիտելիքներն առավել ընդլայնել: Ուստի մինչ բուն նյութն ուսումնասիրելը՝ ուսուցիչը նախ աշակերտներին ուղղված հարցադրումների միջոցով հիշեցնում է, թե նրանց ինչ զրույցներ են հայտնի, որից հետո հանձնարարվում է տեքստն ընթերցել տրամաբանական ավարտ ունեցող հատվածներով, կազմել պլան և ըստ պլանի բանավոր վերապատմել դասանյութով նախատեսված զրույցը: Այսպես՝ յուրաքանչյուր հատված ընթերցելուց հետո ուսուցչի ուղղորդող հարցերով վերլուծության է ենթարկվում ընթերցվածը, կատարվում են մեկնաբանություններ և կանխատեսումներ: «Ուղղորդված ընթերցանության» մեթոդը զուգորդվում է «Կանխագուշակումների աղյուսակ» մեթոդով՝ աշակերտները կարդում են առաջին հատվածը և կանխագուշակում, թե ինչ կարող է տեղի ունենալ հաջորդ հատվածում՝ հենվելով տեքստի կոնկրետ փաստի վրա: Ապա կարդում են երկրորդ հատվածը և փորձում գուշակել, թե ինչ կարող է տեղի ունենալ երրորդ հատվածում, այսպես՝ շարունակաբար: Կարելի է առաջարկել կամ կանխագուշակել հատվածի ավարտի մի քանի տարբերակ; Առաջին հատվածը կարդալուց հետո լրացվում է նախապես գծված աղյուսակի համապատասխան վանդակը:

Ի՞նչ է պատահելու	Ի՞նչ փաստեր ունեմ	Ի՞նչ եղավ

Զրույցի ուսուցումն առավել հետաքրքրական դարձնելու և սովորողների երևակայական մտածողությունը զարգացնելու համար նրանց հանձնարարվում է հորինել այլ ավարտ՝ «Ի՞նչ կլիներ, եթե….» մեթոդով, երբ ընտրվում է թեմային համապատասխան «եթե»-ների շարք: Նմանատիպ աշխատանք կատարելով՝ աշակերտները կկարողանան երևակայության միջոցով նոր լուծումներ գտնել զրույցում պատկերված իրադրության համար: Օրինակ՝ «Ի՞նչ կլիներ, եթե աղքատ գյուղացու տղան ազնիվ և աշխատասեր չլիներ», «Ի՞նչ կլիներ, եթե «Էսպես չի մնա» զրույցը լիներ հեքիաթ, ոչ թե զրույց», «Ի՞նչ կլիներ, եթե տղան լիներ ոչ թե աղքատ գյուղացու, այլ թագավորի որդին» և այլն: Այս կերպ աշակերտները կկարողանան հեքիաթի և զրույցի մասին արդեն ստացած գիտելիքների հիման վրա՝ բնագրի համար այլ ավարտ կամ նույն հերոսներով և սյուժետային գծերով ամբողջական հեքիաթ հորինել: Դասն ամփոփվում է համատեղ քննարկմամբ՝ վեր է հանվում զրույցի բարոյախոսությունը և աշակերտները հասկանում են, որ կյանքում հաջողությունների, ձեռքբերումների կարելի է հասնել միայն ազնիվ, ժիր աշխատանքով, համբերատարությամբ, որ ամեն ինչ անցողիկ է, անգամ աշխարհն ու կյանքն են անցողիկ, որ աշխարհում ոչինչ մնայուն և հաստատ չէ, ո՛չ շահը, ո՛չ հարստությունը, ո՛չ փառքն ու գահը մնայուն չեն, անցնում են, գնում, ուստի պետք է կյանքում թողնել բարի գործ, բարի համբավ, քանի որ դրանք մնայուն են, արժեքավոր և օրինակելի եկող սերնդի համար:

Այսպիսով, ընթերցանությունը դառնում է ինչպես ընթերցանության հանդեպ սեր ու ընթերցողական կարողություն ձևավորելու, այնպես էլ ուսուցման գործընթացի ուսումնա-դաստիարակչական խնդիրների լուծման գործիք, ուստի հարկավոր է ընթերցանության միջոցով մայրենիի ուսուցման դասժամերը հնարավորինս ճիշտ և արդյունավետ կազմակերպել նաև տարրական դասարաններում:

Եզրակացություն

Ամփոփելով «Ընթերցանությունը որպես ուսուցման գործիք» թեմայով սույն հետազոտական աշխատանքը՝ հանգել ենք հետևյալ հիմնական եզրակացություններին.

1. Հայտնի է, ընթերցանության միջոցով ուսուցման գործընթացի կազմակերպումը կրթության հիմնաքարային գործիքներից է, ուստի տարրական դասարաններում առանձնակի ուշադրություն պետք է դարձնել ընթերցանության նպատակային կազմակերպմանն ու դրան ավելի արդյունավետ բնույթ հաղորդելուն: Ասվածը վերաբերում է նաև կրտսեր դպրոցականների ընթերցողական կարողության զարգացման ուղղությամբ աշխատանքներին և ընթերցանության միջոցով մայրենիի դասաժամերի արդյունավետ կազմակերպմանը:
2. Ընթերցանության միջոցով կազմակերպվող ուսուցման գործընթացը պետք է ուղղվի սովորողների անհատական ու ստեղծագործական հմտությունների զարգացմանը, ինչպես նաև երեխայի ինքնուրույնությունը, պատասխանատվությունը և անհատականությունը, արժեհամակարգը ձևավորելուն:
3. Ընթերցանության միջոցով մայրենիի դասաժամերի արդյունավետ կազմակերպման հիմքում ժամանակակից մեթոդներն են, քանի որ դրանք հնարավորություն են ընձեռում աշակերտներին ինքնուրույն ձեռք բերել, կառավարել, մշակել, գնահատել, վերլուծել ընթերցածը և, դրա հիման վրա, ինքնուրույն որոշում կայացնել, աշխատել խմբերով, տեսնել սեփական աշխատանքի արդյունքն ու գնահատել այն, կատարել համատեղ խմբային ու համագործակցային աշխատանք, լինել պատասխանատու և հետևողական այդ աշխատանքի համար, գնահատել ինչպես իրենց, այնպես էլ մյուսների կատարած աշխատանքի արդյունքները, առավել ակտիվորեն ներգրավվել դասապրոցեսում: Վերջիններս էլ նպաստում են ինչպես

դասանյութի հեշտ յուրացմանը, այնպես էլ ուսուցման գործընթացի արդյունավետ կազմակերպմանն ու իրականացմանը:

4. Տարրական դասարաններում ընթերցանության միջոցով կազմակերպվող դասերը պետք է կազմակերպվեն նոր հայեցակետով՝ չլինեն ինքնանպատակ կամ չսահմանափակվեն միայն այս կամ այն կոնկրետ գործառույթով, այլ ընդգրկեն գործառութային (ուսուցողական, ուսումնադաստիարակչական, զարգացնող գործառույթներ) բազմապլան և ճկուն համակարգ: Ասվածը հնարավոր է իրագործել ընթերցանության կազմակերպան գործընթացը նույնքան բազմապլան, բազմաբովանդակ և ճկուն դարձնելու ճանապարհով:

Օգտագործված գրականություն

1. Ափոյան Ա. Է., Համագործակցային ուսուցումը տարրական դասարաններում, Գիտական տեղեկագիր, Դասավանդման մեթոդիկա, № 1, Պրակ Բ, Գյումրի, 2014:
2. Բալայան Լ., Ընթերցանությունը՝ ակտիվ գործընթաց, Նախաշավիղ, 3-4, Գիտամեթոդական հանդես, ԿԱԻ, Երևան, 2009, էջ 44:
3. Գյուլամիրյան Ջ., Կարդալու կարողության և խոսքի զարգացումը տարրական դասարաններում, Ե., Լույս, 1998:
4. Акишина А.А. Учимся учить. Для преподавателя русского языка как иностранного / А.А. Акишина, О.Е. Каган. 7-е изд. М.: Русский язык. Курсы, 2010, 256 с.
5. Пассов Е.И. Обучение чтению: Учебное пособие. Воронеж: НОУ «Интерлингва», 2002, 40 с.
6. Фоломкина С.К. Обучение чтению: текст лекций по курсу «Методика преподавания иностранных языков». М., 1980, 75 с.